



## «ՏԱԹԵՎ» ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՊԱՐԲԵՐԱԹԵՐԹԸ

Երկրորդ տարին է ահա, որ ս. Էջմիածնի հոգևոր ճեմարանի լսարանական բաժնի ուսանող Սամվել սարկավագ Պետրոսյանի խմբագրությամբ, ճեմարանի սաների շանքերով և նրանց աշխատակցությամբ լույս է տեսնում «Տաթև» ուսանողական պարբերաթերթը: Մինչև հիմա լույս են տեսել արդեն վեց համարներ:

«Տաթև» պարբերաթերթի հրատարակության փաստն իսկ նշանակալից, հուսադրող երևոյթ է հոգևոր ճեմարանի կյանքում: Ծնողների աշքին թվում է, թե երեխանները չեն մեծանում, բայց մեր սաները մեծացել են, աճել հոգով ու մտքով, չեն բավարարվում ուսումնառությամբ, այլ ուզում են խոսել, լորովի տեսնել աշխարհը և բացել նրա առաջ: Նրանց առաջին թոթովանքները չեն կարող չուրախացնել մեզ, մեզ, որ տարիներ շարունակ հետևել ենք նրանց հոգու ու մտքի ձևավորման աշխատանքներին, առաջին դասարանի աշակերտական սեղաններից բաժանել նրանց դժվարությունների դառնությունը և հաջողությունների բերկանքը: Նման իր կանաչած արտի եզրին կանճնած մշակին, մենք այսօր ի սրտե ուրախանում ենք «Տաթև»-ի էջերում տեսնելով մեր սաների հոգու ծարակումները՝ ցողված պատանեկան վառ հասակի հույսի ու թախծության, հավատքի և լավատեսության շիներով:

Անշուշտ մեր կողմից միամտություն կիմեր ակնկալել, որ նրանց գրական առաջին փորձների մեջ կհանդիպենք տաղանդի վավերական վկայությունների, կաղապարված մուածումների, քանդակված զգացումների: Ո՛չ, հաշողությունը միանգամից չի գալիս, գրական վարպետությունը միանգամից ձեռք չի բերվում: Տաղանդը պայմանավորված

կենսափորձով, սեփական փորձի ընդհանուցման կարողությամբ: «Տաթև»-ը սկիզբ է միայն: Առաջմ կարևոր այն չէ, թե ինչո՞ւ ինչպես են ասում, այլ այն, թե ի՞նչ են ասում: Առաջմ կարևոր սիրո և աշխատանքի ապացուցն է, որ հաստատական տեսնում ենք «Տաթև»-ի հաշորդական համարների մեջ: Հոգևոր ճեմարանի սաները լեզու առաջ խոսում են այն ամենի մասին, ինչ հոգում է նրանց: Ակնհայտ է նրանց սերը գիր ու գրականության, հոգևոր արժեքների նկատմամբ: «Տաթև»-ի էջերում քաղվածքար ճերկայացված գրականության համառոտ մեջբերումները խոսում են նրանց լայն հետաքրքրությունների մասին, կյանքում ճշմարիտն ու գեղեցիկը որոնելու, հաստատելու նրանց հարատև ճգփ մասին: Առավել որախալին այն է, որ «Տաթև»-ի էջերում երևում են նաև դասարանական բաժնի սովորողների ստորագրությունները: Ուրախալի, հուսադրող է նաև այն, որ «Տաթև»-ի էջերը համարից համարդարձություն են բովանդակությամբ ավելի հարուստ և բազմազան: Գնալով ընդարձակվում է սովորողների հետաքրքրությունների շրջանակը, լայնանում է նրանց հուզգերի, պարումների, խոհերի ու մտորումների ոլորտը:

Չատ խորհրդանշական է, որ «Տաթև»-ի առաջին համարի առաջին էջը բացվում է Վեհափառ Հայրապետի՝ ս. Ծննդյան տոնի առթիվ խոսած ճաղից բերված հատվածով: Վեհափառ Հայրապետը իրեն հատուկ ավետարանական պարզությամբ, բանաստեղծ հոգու լավատեսությամբ ավետում է Քրիստոսի ծնունդը, աշխարհի փրկագրությունը, երկնքի և երկրի հեշտացումը: Ամեն ծնունդ բերկրանք է, որովհետև ամեն ծնուն-

կյանքի հաստատում է և հալթանակ: Ծընունել է նաև «Տաթև»-ը, որի շորջ հավաքված տղաքը բնակիչներն են այս սուրբ Հաստատության, որ դարեր շարունակ մեր ժողովրդի համար եղել է երկնքի ու երկրի հաշտեցման այն միակ վայրը, որտեղից վեր է բարձրացել մեր հոգին, բախել երկնքի դռները Ամենաբարձրայից խնդրելու համար, որ «Փ մարդիկ հաճութին» լինի «և յերկիր խաղաղութին»: Այս սուրբ Հաստատության ավանդույթների ժառանգորդներն են տաթևականները, որոնք պաօք սկսել են խոսել՝ «Տաթև»-ի էջերին հաճանալով իրենց հոգու ու մտքի առաջին ճիշերը, իրենց զգացածի և իմացածի արդեն խկ իմաստավորվել սկսվող առաջին արձագանքները:

«Տաթև»-ում կան արձակ և չափածո գրվածքներ, բանասիրական հոդվածներ, գրաքարից աշխարհաբար փոխադրումներ, թարգմանություններ, որոնք գրվել կամ կատարվել են հոգևոր ճեմարանի սաների ուժերով:

«Տարեկ»-ի աշխատակիցներից իրենց գործոն մասնակցությամբ, ինչպես նաև իրենց գրական շնորհով առանձնապես աշքի են ընկալու Ավետիք սրբ. Արաքաջանն ու Սամվել սրբ. Պետրոսյանը: Երկուսն էլ գրում են և՝ արձակ, և՝ շափածող: Սամվել սրբ. Պետրոսյանը ստորագրել է նաև պատմա-բանասիրական հոդվածների տակ, որոնք զուրկ չեն շահեկանությունից: Նա ունի փաստերի համադրումով կամ հակադրումով սեփական եզրակացությունների հանգելու կարողություն, որը նրա առաջիկա հաջողությունների երաշխիքն է: Սամվել սրբ. Պետրոսյանը օժտված է նաև արձակագրի շնորհներով, նա ունի նույն ու քընդուռ բանաստեղծական խառնվածք, բնության զգացողություն, սահուն լեզու և նկարագրելու կարողություն: Հաճուքով են կարդացվում նրա «Ծաղիկներ», «Բնության գրկում», «Կիրակնամուտի ժամերգություն» արձակ գրվածքները: Բայց առանձնապես հաջող է նրա «Չոն» խորագրված բանաստեղծությունը՝ նվիրված Վեհափառ Հայրապետի հորելյանին, բանաստեղծություն, որը զերծ է անհարլի սելենեթանքներից: Հաջորդական տողերի մեջ բացվում է Վեհափառ Հայրապետի անձի և գործի նկատմամբ պիրով ու երախտագիտությամբ բարախող մի պարզ, անքանի և զարուն հոգի:

Զարմանալի գուցե թվա այս ոմանց,  
Բայց արեգակ եք Դուք դարձել, Վեհա-  
փառ,  
Որ ափոսմ է ճառագայթներն իր թուլիշ  
Ու տարածում յոն խնորդումն Անմասվար:

Նորաբռնըց հոգիներ ենք, Վեհափառ,  
Օրինեցեք մեզ Զեր հայրական օրինու-  
թյամբ,  
Ու շնչի տակ Զեր դևոնդյան բռցավառ  
Թող մենք աճենք, լցվենք հույսով, խըն-  
դությամբ:

S U P E R

© G. P. E. B. P. R. O. L. P. O.

ՀԵՂԵԿՈՐ ՃԵՄԱՐԱՆԻ  
ՈՒՍԱՆՈՂՈՒԹՅԱՆ

9. SEP 16 1973



Издательство «Логос»

«Տայես» պարբերաթերթի շապիկի առաջին էջը

Ավետիք սրկ. Սրբաջանի մոտ գրական վարպետությունը ավելի է ընդգծված: Նա ունի իր ոճը, որ անմիջապես տարրերվում է մյուսներից: Անհանգիստ, որոնող մորթի տեր է Ավետիք սարկավագը: Հավասար հաջողությամբ գրում է և արձակ, և չափածու: Իր արձակը, որպես ձև, ավելի հաջող է: Նախադասությունները կուռ են և լավ կառուցված: Ոճավորված է նրա արձակը: Տառապում է, սակայն, ինչ-որ հատակության պակասով: Հարցականներն ու կախման կետերը շատ են: Այս էլ հասուն է, անշուշտ, երիտասարդական տարիքին: Երիտասարդները շատ շուտ են տպավորվում և առանց խորացնելու իրենց տպավորությունը և հասնելու բյուրեղացման, իրենց հերթին ուզում են տպավորել հարցականներով և կահանան կետեղով: Սակայն առ

մի թերություն է, որ ժամանակի ձեռքը շուտով կվերացնի:

Այլուամենալիս, ճշմարտապահ զգացված, հոգի և սրտագրավ է նրա գրածը Հայկազո՞ն արքեպիսկոպոսի մահվան կապակցությամբ: Այսուղի հարցալաններն ու կախման կետերը տեղին են: Միրված անձի մահը ցնցել է նրան: Տագեապած կյանքի ու մահվան ատեղծվածից նա մերթ ըմբռուսանում է, մերթ ընկնդլում՝ ի հայր բերելով վշտից տարութեր իր ավելուծ հոգու հակընդում շարժումները: Վերջում կարծես հաշովում է և խաղաղվում՝ հանգելով այն ճիշտ եզրակացությանը, որ «կյանքը լոկ դորության ճանապարհ է...»:

Հետաքրքիր են նաև Ավետիք սարկավագի բանաստեղծությունները: Նա ունի խոհական խառնվածք. սիրում է մտածել, քրքրել կյանքի հանգույցը և երբեմն երչանիկ զուգադիպությամբ կանգ է առնում կյանքի իրական, ճշմարիտ պատկերացման վրա.

Մեղքի մթագին գիշեր  
Անաստո, անույս,  
Հավերժ թվացող  
Ուկեղող մի հույս.  
Ահա մեր կյանքը...

Անհանգիստ մտքի տեր այս սարկավագը կարծես չի վախենում տառապանքից. նոյնիսկ սիրում է այն. մերժում է կյանքը առանց վշտի: Թույլ հոգիներին, անշուշու, տառապանքը խորտակում է, բայց ուժեղ ներին ավելի ևս կոփում է՝ նրանց հասցընելով «մարդկային սրտի սուրբ զարկերակի» շշափմանը: Չափ հաջող է Ավետիք սարկավագի «Պիտի տառապեա» բանաստեղծությունը: Չափ գեղեցիկ է հատկապես նետւայլ քաղյակը.

Պիտի ապրես մանկությունն աշխարհի.  
Որ մեծանա,  
Եկ տանել է պետք ծանր բեռն այս գնդի,  
Որ ամրանա...

«Գեղեցիկ բաներն արցունքի մեջ են ծընվում»: Որնանի այս խորքը կարծես արձագանք են գտել Արարաջյանի հոգում: Տառապանքի հալթահարումը ստեղծագործությամբ արիության գործ է, որից զուրկ չէ Ավետիք սարկավագը: Արարաջյանը մի անուն է, որ հուսադրում է:

Ինձ առանձնապես որախացրեց Հարություն Սարգսյանի «Տատիկս» խորագրված արձակ գրությունը: Սարգսյանը սովորում էր ճեմառանի դասարանական բաժնում, երբ գրեց այդ էջը: Այժմ նա Բ լսարանի ուսանող

սարկավագ է: Ի թե՛ լորջ, ինքնամիտով, համեստ այդ տղան օծովված է գրողի արժանիքներով: Ունի նյութի մատուցման պարզ ու բնական եղանակ: Գրվածքը շատ փոքր մշակումով կարող ես տպագրել ուղած թերթում: Ամեն ինչ ճշմարիտ է արտեղ և անկենծորեն զգացված: Հեղինակը սրտառուց պարզությամբ, անսերծելով բնական ոճով, վերհուցի ձևով պատմում է իր «լավ», բարի տափկի մասին», տարիների մշտից միջից նրան դուրս բերելով ու կանգնեցնելով մեր առաջ իր «խորշումած դեմքի կնճիռներով, արծաթյա մազերով, բարի հայցրով, լուսն հավատով լեցուն աչքերով, որոնց անկյունները ծվարած ինչ-որ կարո՞ւն կա, թե վախ, սասա՞ն կա և թե երազանք», հարցնում է հեղինակը ուշացած թախիծով ու խանդադատանքով:

Սարգսյանին հաջողվել է գտնել այն տիպական մանրամասները, որոնցով բնորոշվում է հայ տատիկի և ննդինաբապես տատիկի խորապես մարդկային հոգիչ կերպարը: Ողբերգական է եղել մեր պատմությունը. տեղահանություն, աքսոր, կորցրած սիրելիներ, բայց նաև անմարում հույս, հայրենիքի կարուտ...: Սարգսյանին հաջողվել է իր տատիկի մետ կապված հուշերով տաղ հայ տատիկի հավաքական կերպարը: Կարելի է հույսեր կապել նաև Հարություն սարկավագ Սարգսյանին անվան մետ:

Անմետաքրքիր չեն նաև «Տաթև»-ում լույս տեսած գրաքարից մյուս փոխադրումներն ու ֆրանսերենից կատարված թարգմանությունները, որոնցում մկանվում է որոշակի ճաշակ և հմտություն: Առանձնապես ուշագրավ է Ժիրայր սարկավագի «Մտորումներ Նարեկացու գրական կաստակի շորթ» աշխատությունը՝ իր խիս բնորոշությունով, նարեկյան գործի ճիշտ մեկնարանությամբ և գնահատումով: Արժի հիշատակել նաև Գրիգոր սարկավագ Քեշիշյանի «Լուսի խաղալիքները» արձակ գրությունը, որի մեջ մանկական անմեղ տարիների մկանվում գզացված կարուուն ու ափսոսանքը անկեղծ ու համոզի են հրաշում:

Ինչ որ անառարկելի է և խրախուսանքի արժանի, դա կազմակերպված, թեսնողական աշխատանքի փաստն է, որ մկանվում է «Տաթև»-ի Էշերում: Տղաները սիրով ու ոգեփորությամբ աշխատում են. ամեն մեկն իր մանակցությունն է բերում «Տաթև»-ի աշխատանքներին. ոմանք փոխադրումներով, ոմանք թարգմանություններով, ոմանք էլ զուս գեղարվեստական ստեղծագործություններով: «Տաթև»-ի արժանիքներից է նաև լեզվական որոշակի մակարդակի հաղթահարումն ու նվաճումը: «Տաթև»-ում լույս

տեսած բոլոր հոդվածներն էլ շարադրված են կիրք ու մաքուր հայերենով. սպառաբռումներն ու վրիպակները շատ սակավ են: Զգացվում է իր գործը սիրող հմտութ ու բարեխիղճ խմբագրի ձեռքը:

Որպեսզի «Տաթև»-ը նյութերի ժողովածուի տպավորություն չթողնի, առաջիկայում ցանկալի կլիներ, որ խմբագրությունը նյութերը ենթարկեր որոշակի դասակարգման, ամեն մեկը զետեղելով համապատասխան բաժիններում: Վաս չեր լինի, եթե «Տա-

թեվ»-ը ունենար նաև կրոնա-բարոյական բաժին և ավելի լայնորեն արձագանքեր ձևաբանի և միաբանության կյանքը հոգող հարցերին:

Հաջողության գրավականը աշխատանքն է: «Տաթև»ում կա աշխատանքի փաստը: Հույսով ենք, որ կոննենանք նաև հաջողությունների փաստը:

Հաջողություն տաթևականներին:

ԳՐԻԳՈՐ ԳՅՈՒՂՅԱՆ

